

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողական ծառայության փորձագետ Նարեկ Քասյանի 2020 թվականի հոկտեմբերի 23-ից 2021 թվականի հոկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածի համար:

Ես՝ Նարեկ Քասյանս, Վերահսկողական ծառայությունում որպես փորձագետ աշխատում եմ 2020 թվականի հոկտեմբերի 23-ին կնքված N 64 պայմանագրի համաձայն: 2020 թվականի հոկտեմբերի 23-ից 2021 թվականի հոկտեմբերի 21-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1. Նոտարների և սնանկության կառավարիչների գործունեության օրինականության ստուգում,
2. Վերահսկողական գործառույթների իրականացման ժամանակ ի հայտ եկած կարգապահական վարույթ հարուցելու առիթներով վարույթի հարուցում ,
3. Ընթացիկ ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված ոչ օրինական գործողություններ իրականացրած նոտարների և սնանկության կառավարիչների այդպիսի գործելաոճի շարժառիթների և դրդապատճառների բացահայտում և կանխարգելում,
4. Մշակել և վերահսկողական ծառայության պետի հաստատմանն են ներկայացրել նոտարների և սնանկության կառավարիչների վերաբերյալ մի շարք գրություններ,
5. Պատասխանել եմ քաղաքացիների և պետական մարմինների կողմից վերահսկողական ծառայությանն ուղղված գրություններին,
6. Ապահովել եմ կառավարությունից ստացված հանձնարարականների կատարում,
7. Իրականացրել եմ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» և «Հայաստանի Հանրապետության ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների դեմ բերված բողոքների ուսումնասիրություն և ընթացքի լուծում:

8. Դատական ներկայացուցչություն եմ ապահովել՝ տարբեր գործերով հանդես գալով արդարադատության նախարարության անունից,
9. Ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ կատարել եմ օտարերկրյա լավագույն փորձի մի շարք ուսումնասիրություններ:

Հարգանքով՝



Նարեկ Քասյան
20.10.2021